

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 'ՆՈՐ ՕՐ'Ի

ՆԱԽԱ ԿԱՐ ԱՆՏԻ ԹՂԹԱԿՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԻ ԵՒ ՈՒՂՂՈՒ ԸՄԻ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Ձեռագիրներն եւ չեն դարձուիր,
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆՆԵԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ		ՂՐԵ. ՈՂՋ
Գանձիկի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից	սարեկան	60
»	վեցամսեայ	35
ԱՐՏՕՆԱՏԱՆԻ ՇԱՐԱՐ		
Տարեկան	»	36 րանգ 18
վեցամսեայ	»	10
ԲՈՒՍԻՆՆԵՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՐԱՐ		
Տարեկան	»	7 րուբլի 7
վեցամսեայ	»	4
ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՊ ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՅԱՆՔԸ		
Թերթին վարչութեան վրայ և		

ԶՈՐԵՔՇԱՐԹԻ 14/27 ՓԵՏՐՎԱՐ 1901

ՔՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 69

Ա. Զ. Գ.

Եզրիպտոսի Արտասահմանի և կազմակարգի արգոյ բաժանորդներն անոնք որ մինչև ցարդ վճարած չեն իրեն բաժանորդագրիները, կը խնդրուի որ հաճին անյապաղ վճարել:

Եզրիպտոսի բաժանորդները կրնան Մանտա-Ֆոսթով ուղարկել իրենց բաժանորդագրիները. թերթիս վերևը նշանակուած հասցէին:

ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

«Ազգին ամեն մէկ անհատը առ Ազգը պարտաւորութիւններ ունի. Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամէն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. զարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի Ազգին՝ և Ազգն անհատներէն:

Ահա այս հիմնական սկզբան վրայ հիմնուած է Հայոց Սահմանադրական օրենքը, ինչպէս որ միևնոյն սկզբան վրայ կը հաստատուին կառավարութեան և ազգերու օրէնքները:

Ազգային Սահմանադրական օրենքը 1863ին Սուլթան Ալիզի օրով հաստատուեցաւ. դժբաղդաբար 1885էն սկսեալ անոր գործադրութիւնը Սուլթան Համիտի քմահաճոյքին կախեալ մնացած է:

Գալով Եզրիպտոսի միևնոյն Սահմանադրական Օրէնքն հոն ալ գործադրելի է. բայց տարբեր ժամանակներու մէջ ինչ ինչ զարտաւորութիւններ՝ Սահմանադրական Օրէնքին այս ինչ այն ինչ արամադրութիւնները սարսաժ են, և անոր տեղը հիմնած ուրոյն արամադրութիւններ որոնք տպադրութեան յանձնուած չըլլալուն ժողովրդեան անձանօթ մնացած են:

Սահմանադրական Օրէնքին հարազատ օրինակը — որովհետև ազաւազեալ օրինակներ ևս կան — ձեռք բերած ըլլալով որուն համար երեք ամիսէ ի վեր կ'աշխատէինք, որոշեցինք զայն թերթիս մէջ ի ստորև հրատարակել, զոր կը յուսանք ութը անգամէն ամբողջացնել: Անկէ վերջը պիտի հրատարակենք այն արամադրութիւնները որոնք տեղւոյս Ազգային վարչութեանը որոշմամբ զարտուղած են Ազգ. Սահմ. Օրէնքէն:

Յատակից շարժու մէջ պիտի հրատարակենք:

1. Փաստարան Տ. ԺԱՆ ՊՐՈՒՍԱԼԻԻ «Արեւելցի կիներ» վերնագրին սակ շահեկան մէկ յօդուածը:

2. Նաև փաստարան Տ. ԽՈՍՐՈՎ ԶՈՀՐԱՊԻ նշանախօսութիւններու և ամուսնութիւններու վրայոք կարեւոր մէկ ուսումնասիրութիւնը:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

ՄԵԼԻՏՊՈԼԷ ԵՐՈՒՍԱԼԵՄ
25 ՕՐ ՊԱՂԵՍՏԻՆՈՒ ՄԷՋ

(Շաա. ճակտորդ թիւ 150)

—Այդ բարձր զանգակատունով եկեղեցին Ռուսաց եկեղեցին չէ:

—Ռուսները Բեթլեհեմի մէջ գրեթէ ոչինչ չունին: Այն տեղի ամենանշանաւոր տեղերը կը պատկանին Յունաց, Հայոց և կաթողիկոսաց, իսկ այդ բարձրագագած եկեղեցին կը պատկանի Բողոքականներին, ասաց Յոյն վաճառականը:

—Ահա՛ և Երուսաղեմը սկսեց երեւիլ, — ճանապարհորդներէ մին բացազանչեց:

Ես ալ անմիջապէս արեւմուտքը թողի և դարձայ գէպի հարաւ և մի բան կորցրածի պէս սկսեցի ասդիս անդին նայիլ՝ փնտռելով Գողգոթան...

—Ելլալընք, ո՛ւր է Գողգոթան, հարցրի բարցրածայն ճանապարհորդակիցներս:

—Գողգոթան, պաթիւլքա (Տէր-Հայր) այս տեղէն չերևար, պատասխանեց Ռուս ուխտաւորների ղեկավարը: (խալալը)

Այդ միջոցին նկատեցի, որ զլիաւորապէս Ռուս ուխտաւորները շերմեանդութեամբ կը խաչակնքէին երեաները, և զլուխները կը խոնարհեցնէին ՚ի նշան երկրպագութեան Երուսաղեմի:

Ես ևս սիրով երեսս խաչակնքեցի և խոնարհեցրի զլուխ ՚ի նշան երկրպագութեան այն յաղթանակի, որոյ ղեմաց որբան կմեղմանան Աղէքսանդր Մակեդոնացոյ, Անիբալի, Յուլիոս կեսարի, Փրոտերկոս երկրորդի, Նաբոլէոն Գոնալիազի, Սուլթորովի և Մովթէի հռչակուոր յաղթութիւնները...

«Խեղճ մարդ, ինքս ինձ ասացի, խաչակնքեցի՛ր Երեսոյ...: Բայց դու կարող ես մեծ խաչողոյն պէս խաչուիլ, ապսակուիլ, անարգուիլ և հաշածուիլ՝ ՆՈՐԱ բարոյագիտութիւնը ազատեմն ուսումնասիրելու և սարածելու համար...: Չէ՛ որ երեսս խաչակնքելը այդ կը նշանակէ...: Առաջ՝ ազնիւ մարդու պէս՝ խօստացիր մեծ խաչողին... Գողգոթայի սիրահարին՝ որ դու մինչև մահդ ուսումնասիրելու ես նորա բարոյագիտութիւնը, ըստ այնմ կենցաղավարելու և ուրիշներին նոյնը ազատեմն սովորեցնելու՝ արհամարհելով ամենայն տեսակ բռնութիւն...: Այս հոգով խաչակնքէ երեսոյ ո՛չ թէ մի անգամ, այլ բազմաթիւ... և անթիւ անգամ... ապա թէ ոչ, երեքք մի՛ խաչակնքեր. որովհետև խաչակնքելով երեսոյ՝ ինքզինքդ դրոշմած կ'ըլիս խաչեքայ, կեղծաւոր, ուխտադրած և խօսմանդրած անուններով...»:

—Վո՛թ նաչ մոնասթըր (ահա մեր վանքը) ոռու ուխտաւորներէ մինը բարձրածայն ասաց. և՛ վանքին ուղղութիւնը ցոյց տալով՝ ետէ ետև երեսը կը խաչակնքէր և խոնարհ երկրպագութիւններ կընէր:

Այս միջոցին յոյն վաճառականը մտեցաւ ինձ և ասաց.

—Կոնսնէք մեր դիմացը հետուէն երեսացոյ՝ բարձրագլուխ զտնգակատունը. դա ոռուաց Համբարձման եկեղեցւոյ զանգակատունն է, որմէն քիչ հեռու կը գտնուի Քրիստոսի իսկական Համբարձման մատուռը: Այդ լեռն է, որ կկոչուի Ձիթենեաց լեռ:

Քիչ ժամանակ Ձիթենեաց լեռը և ոռուաց Համբարձման եկեղեցւոյ զանգակատունը դիտելէ յետոյ, աչքերս դարձրի Երուսաղեմի վրայ և իմ հետեալ մեղադրական արտայայտեցի նորա մասին՝ մտածելով այսպէս.

«Դու, Երուսաղեմ, մեծ ես ինձ համար, որովհետև քո մէջ կատարուեցաւ Գողգոթայի ամենամեծ յաղթութիւնը...: Բայց մի և նոյն ժամանակ դու ինձ համար ամենամարդքաղաքն ես. որովհետև Աշխարհիս ամենամեծ՝ Բարոյագիտութեան Ռուսացիչը դու եղար անարգող, հալածող, ապատկող, ծեծող, բանտարկող և աւազակների մէջ խաչող ու՝ 33 տա-

րեկան հասակի մէջ՝ անգթաբար ըստանող...: Դու ինձ համար ամենամարդքաղաքն ես, որովհետև Յովհաննէս Մկրտչի պէս մեծ փիլիսոփայ բարոյագէտը՝ մի պոռնիկ կնոջ կամքով բանտարկեցիր և յետոյ զազանաբար զլիաւորեցիր... և երիտասարդ հասակին մէջ...:

Ինչպէս չանուանեմ քեզ ամենամարդքաղաք, երբ կմտաբերեմ քո ցոց տուած մեծամեծ պատիւներդ խնթ Սաուզներին, Իգամոլ Սոզոմոններին, ուրիշներ կանայքը յափշտակողներին՝ Հերովդեսներին...:

Այո՛, դու, Երուսաղեմ, ինձ համար հաստատապէս ամենամարդքաղաքն ես, որովհետև քոյր ֆալաֆներէն աւելի Մրքաքիւնը անարգեց ես... ոսնակոյս ես աւել...:

Այո՛, կկրկնեմ, դու քո յարգող ու պատիւք հազարաւոր տարիներէ ի վեր կորցրած ես քո շնացող թագաւորներովդ և ժողովրդներովդ...:

Ինչ անուն տալու է և մեզ Հայերս, երբ Մեծն Ներսէսները, Մեծն Սահակները, Մեծն Իզմիրլեանները կթուրեւորենք, կաթողիկոսական և պատրիարքական աթոռներէ վայր կիջեցնենք ու կ'բանտարկենք...:

Ինչ անուն տալու է մեզ Հայերիս, երբ մենք Մեծին Սահակների տեղ Սուրմակներ ընտրող ենք... ի վերջոյ ինչ անուն տալու է Հայերիս, երբ մենք՝ մեր մէջը ունենալով բարոյապէս և մտաւորապէս բարձր զարգացման տէր աշխարհականներ, ինչպէսիք եղած են հանգուցեալ Պետրոս Չանչեան, Ստեփաննոս Նազարեան և Գրիգոր Ճանչեանն է բարձրագոյն բարոյական և մտաւորական զարգացմամբ Պ. Սմբատ Շահազիզեան զրազէտ բանաստեղծը, ընտրել ենք հոգեւորականներէ՝ համեմատաբար շատ աւելի տղայներ...: Եւ յիւրաքի՛ ինչ համեմատութիւն կարող է լինել Չանչեանի, Նազարեանի, Ճանչեանի և Շահազիզեանի մէջ՝ մի կողմէ և Մատթէոս, Գէորգ, Մակար հանգուցեալ կաթողիկոսների մէջ՝ միւս կողմէ...: Իսկ երբ մտաբերենք Յովհաննէս կարբեցի կաթողիկոսը՝ զգուանք ի բաժակը՝ բառի ընդարձակ նշանակութեամբ՝ իսպառ կ'ըլեցուի և եզրաթափ կ'ըլինի...:

զարգացման յառաջդիմութիւնները:

Քանի՜ցս Գ. զղիացի վաճառականը՝ ապրանք գնելու ժամանակ զիս անխիղճ կերպով խաբած է: Քսակահանութիւնը ստէ՛լ կպատահի: Մի կնոջ գրպանէ թրա միայն մէջ՝ բաւականին դրամ պարունակող քուակը հանել էին բազմութեան և իմ ներկայութեան:

Այս տեղ ամուսինների փոխադարձ հաւատարմութեան վրայ կ'ծիծաղեն . . . Իսկ շնութիւնը ժողովրդոց ամեն խաւերի մէջ ընդունուած է, իբրև աւելի օրինաւոր կարգ կենցաղավարութեան . . .

«Էջօլ Ակրիֆօլ նասիօնալ» բարձրագոյն ճեմարանի շինութեան մէջ՝ երեկոյեան ժամը 7էն մինչև 11 ժողովրդներին հարկաւոր գիտութիւնների վրայ խօսուած դասախօսութիւնները շատ օգտակար և օրինակելի են: Ուսանողական դասախօսութիւնները լսելէ վերջը կերթայի և այս դասախօսութիւնները լսելու, լսարանները ամեն երեկոյ խառն բազմութիւններով կը ելնուին:

Գաղղիացիք՝ ըստ իմ անձնական դիտողութեանց աւելի մտաւոր զարգացում ունին, քան թէ բարոյական ու մտաւորական . . .

ԳԵՐՄԱՆԱՅԻՒՄ

1897 թուականին Պաւլէրիայի մայրաքաղաքի Միւնխախի մօտ զըտնուող վերինօֆեն անունով գիւղի մէջ՝ ֆէնէյփի աշակերտների մօտ ջրբարձութեան արհեստը սորվելու համար՝ մի քանի ժամանակ բնակուեցայ, և մօտէն կարողացայ ճանաչել գերմանացի-գիւղացի ժողովուրդը, որն ուս և գաղղիացի ժողովրդներէ շատ աւելի բարոյական, մտաւորական և մարմնական զարգացում ունի: Գերգաստանի, Եկեղեցի, ուսումնարանի և գիւղատնտեսական աշխատութեանց յարգը սոցա մէջ շատ բարձր է . . .

(Շարունակելու)
ՍՐԱՊԻՈՆ ԲՆՆՑ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
22 փետր. 1901 Դահլիճ:

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ն. Բ. ԽԵՐՏԻՎԷՐ բարեհաստ և Որբախընամ Բնկերութեան այս երեկոյ թատերական երեկոյթին առթիւ ըստ անգլիական ուղի նուիրել, Կնայաստ Հայաստանի որբերուն:

«Նոր-Օր»ի անցեալ շաբաթ օրուան թիւին մէջ «27ի երեկոյթը վերնագրին տակ առաջնորդող յօդուած մը նուիրուած էր Հայաստանի որբերուն:

Տեղոյս «Փար ա' Ալեքստարի» Ֆրանսական օրաթերթը «Նոր-Օր»ի յիշեալ յօդուածին մի քանի հաստատուններ իր երեկուան թիւին մէջ թարգմանաբար արտատրուելով հանդերձ՝ հրաւեր կարգացած է Գահրէի բնակչութեան բաշարելու Կնայաստ որբերու կազմակերպուած 27ի թատերական երեկոյթը:

Փառ ա' Ալեքստարի ցոյց տուած սոյն մարդասարական համակրութեան փոխարէն երախտագիտութիւն կը պարտինք:

«Սուէրէն» տեղոյս «Գուտիլէ տիւ Նիլ» օրաթերթին զրկուած թղթակցութեան մը մէջ նը տեղեկացնեն թո՛ւ էոյն տեղոյս «Ֆոզո» վարժարանի աշակերտներն Պ. Արամ փափագեան որ հազիւ տասներեք տարեկան կայ, վերջին վեցամեայ ճննութեանց մէջ առաջին մրցանակ շահած է: Նմանապէս Սէն-Ժան-Պաթիսթի տօնին առթիւ կազմակերպուած դիմաօրական հանդեսին մէջ՝ ուր դնագահի պաշտօն կը վարեր, առաջին արժամ մետալը ստացած է: (Պ. Արամ փափագեան նայինքն «Նոր-Օր»ի վարչութեան ներկայացուցչին կրտսերագոյն եղբայրն է):

ԱՅՍ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԵՐԵՎԱՆԻԹԸ

Գոհութեամբ կը տեղեկանանք թէ ի նպաստ Որբախընամ ընկերութեանց այս գիշերուան՝ Օբէրայի թատրոնին մէջ տրուելիք ներկայացումը մեծ յաջողութիւն պիտի զանէ:

Շնորհիւ կարգադիր մասնախմբին անխնայ աշխատութեան օթեակները և սրահը բոլորովին լեցուն պիտի ըլլան օտար ազգի և հայ բազմութեամբ:

Ն Ո Ւ Պ Ա Ր Փ Ա Շ Ա Յ Ի

«Նոր-Օր»ի անցեալ թիւերէն միոյն մէջ ծանուցուած էր թէ՛ ի յիշատակ Նուպար փաշայի՝ Աղիբասանգրիոյ հըրապարակներէն միոյն վրայ յուշարձան մը պիտի կանգնուի:

Նաց Ազգին մէջ գործադրուած եղանակէն գուցէ աւելի կանոնաւոր և օրինաւոր կերպով Եկեղեցեաց ժողովուրդներէն (այսինքն թաղերէն) ընտրուին:

Եւ որովհետև զուրսերը բնակող Հայ ժողովուրդները իրաւամբ կը գանգատին թէ Պատրիարքարանի որոշումներուն խորհրդակցութիւնէն և մասնակցութիւնէն բոլորովին զուրկ են: Երեսփոխաններուն մէջ մասը գաւառներուն կազմէն ընտրուին, և կոտանալնուպօղսոյ թաղերուն Երեսփոխանաց վրայ աւելցուին: Եւ ժողովոյն կրօնական մասը այսինքն անգամաց քանակը կոտանալնուպօղսոյ Եկեղեցեակներուն կողմէն ընտրուին: որով ընդհանուր ժողովոյ անգամաց թիւը ընդ ամենը հարիւր քսուսուսի կ'ամփոփուի:

Առոնց պաշտօնը տասն տարի տեւէ, և ամեն տարի տասներորդ մասը փոխուելով նորէն ընտրութիւն ըլլայ:

Ընդհանուր ժողովը անուանէ թէ՛ զՊատրիարք և թէ՛ անոր նախագահութեամբ գործող Ազգային երկուց ժողովոյ անգամները, և անոնց գործողութեանց վերատեսչութիւն ընէ:

(Շարունակելի)

Աղիբասանգրիոյ թաղապետութեան առաջարկութեան վրայ՝ հետեւեալ կարգադիր մասնախմբը կազմուած է:

- Մօրիս փաշա. Նախագահ.
- Տր. Շիգ Խէյ. Գեղ. Ն. Սև.
- Պ. Հարօֆիյէ Գանձապետ.
- Պ. Լրմուան. Քարտուղար.

Ահաւասիկ թարգմանութիւնը այն նամակին գոր Ն. Վ. Մօրիս փաշա զրկած է Տր. Շիգին:

Յարգելի Տր. Շիգ.

Ձեր պատուական նամակն ըստացայ, որով կ'առաջարկէք ինձ ընդունիլ Նախագահութիւնը այն կարգադիր մասնախմբին գոր պիտի ըզբազի յուշարձան մը կանգնելու ի յիշատակ Նուպար փաշայի, Եզիպտոսի Պետական ամենահոյակապ դէմքերէն միոյն:

Մեծ հաճոյքով կ'ընդունիմ ինձ առաջարկուած պաշտօնը, միանգամայն կը փութամ շնորհակալութիւն յայտնել Ձեզ, որ առիթն ընծայեցիք ինձ՝ մաս մը ունենալ օղբացեալ Նուպար փաշայի յիշատակը յաւերժացնելու գործին մէջ:

Որքան որ՝ որոշած եմ յառաջիկայ Մայիսին Եւրոպա մեկնիլ, ամեն պարագայի մէջ պատրաստ եմ գործակցել ըստ իմ կարեաց կարգադիր մասնախմբին աշխատութիւններուն:

Միամ յարգանք
ԿՄՐԻՍ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՔԱՂՈՒԱԾԻ

Օտեսայի մէջ ցորենի չափազանց սուլութիւն կայ. սուլը սկսած է տիրել շրջակայ գիւղերուն մէջ, Ռուսական կառավարութիւնը երկու միլիոն րուպլի չափ գումար մը բաշխած է այն տեղւոյն կարօտ բնակիչներուն:

—Գերմանիոյ վիճէլմ կայսեր մայրը՝ Ֆրէտէրիկ թագուհին ծանր հիւանդ է. բժիշկները յայտերնին կըտրած են:

—Տարտանելի Նեղուցին մօտերը սաստիկ փոթորիկներ տեղի ունեցեր են շարժում մէջ. մի քանի նաւեր չի կրնալով ճամբանին շարունակել, մօտակայ ծոցը ապաստաններ են:

—Չօրավար Պօթա՝ Լօրտ Գիշերի հետ բանակցութեան մասին ուզած է:

—Թրանսպալի պատերազմին առթիւ Անգլիական կառավարութիւնը մինչև ցարդ 81,000,000 անգլ. ոսկի ծախսած է:

ԱՆԳՂԻՈՅ ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՀԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ

Անգլիական թերթերը հետեւեալ մանրամասնութիւնները կուտան վիզթուիա թագուհոյն հարստութեանը վրայօք:

Թագուհոյն անձնական գանձի եւ ամուսը տարեկան 543,000 անգլ. ոսկոյ այսինքն 13 ու կէս միլիոն ֆլորանդի կը հասնէր:

Այդ գումարէն 385,000 ոսկին Թագուհոյն տնտեսական յասակացու-

ԽՏԻՎ ԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԵԻԻՊՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՏՏԱՍԻԲԱԿԱՆ ԸՆԿ. ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ ԽՈՒՄԲ
Ընդ սեօրէմոսքեալիս Գ. Պէրնիի

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՇԲԵՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի Ն Պ Ա Ս Տ
ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

Ձորեխարթի, 27 փետրուար ժամը 8 - 3/4 ին

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ
ՏՅԿԻՆ ԺԱՆՆ ԶԱՅԿԵՆԻ

LA PRINCESSE DE BAGDAD

ԱՐՏԱԿ ՀԱՏՈՒԱԾ ԵՐԵՎ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ
Գործ ԱՂԵՔ. ՏԻՒՄԱ ՈՐԴԻՈՅՆ

L'ANGLAIS TEL QU'ON LE PARLE

ՎՕՏՎԻԼ ՄԷԿ ԱՐԱՐ
ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԹՐԻՍԹԱՆ ՊԵՌՆԱՐԻ

Գ Ի Ն Ե Ր

Առաջին Օթեակ թիւ 11 Դ. Ո.	600	Երկրորդ Օթեակ թիւ Դ. Ո.	200
Պէլլուար	400	Թիկոմթոռ	40
Առաջին Օթեակ թիւ	400	Սթալ	20
Գերմատուռ	Դ. Ո. 5		

Լով: Գնացողը Թագաւորական գեր-
դատարանին պատկանող իշխանազուն-
ներուն, իշխաններուն, և իշխանուհի-
ներուն մէջ կը բաժնուէր: Արդի թա-
գաւոր այն ատենուան Կողէս իշխա-
նը միմիայն տարեկան 40,000 տկի
կ'առնէր իւր բաժին:

Թագաւորին միշտ խնայողութեամբ
կ'ապրէր. առոր ապացոյցը՝ երբ որ
Թագաւորին դահը բարձրացաւ Կայսե-
րական կալուածները տարեկան հա-
զիւ 125,000 տկի հասոյթ կը բերէին,
մինչդեռ Թագաւորին օրով այդ հա-
սոյթները երթալով կրկնապատկուե-
ցաւ, ու էն վերջին ժամանակներուն
585,000 տկից բարձրացած էր: Մէկ
ձեռնոցի մը համար, կրտսն, 12 շիլինգն
աւելի երէք վճարած չէ Թագաւորին:

Արդսպարդ երբէք չ'էր սիրեր,
բայց և սնուէր 300,000 տկիէն ուե-
լի գոհարեղէն տնէր, որոնց մեծ մա-
սը իրեն նուէր արտած են:

Լ Բ Ա Ք Ա Ղ

«Ռիզանդիան»ի մէջ կը կարգանք:

Այս օրը՝ Ազգ. Առաջնորդ արանը
ծանր տագնապ մը վճարելու դատա-
պարտուեցաւ տեղական դատարանի
կողմէ: Ի՞նչ վերաքննութեան գիտած
են, սակայն ձեռնհաս անձեր կ'յա-
տարարեն թէ գաղտնի չ'առնու յոյս
չկայ: Ստիպի մէջ պարտին ունե-
ցած բաւական ընդարձակութեամբ մէկ
զեւտինը, որ արեւմտեան սնկուած է,
ըստ սովորութեան վարձու կ'ուտէր:
Անցեալ տարի վարձակալութեան պայ-
մանաւանդ լրանալով՝ նախորդ վար-
ձակալէն ետ կ'առնուի և աւելի բար-
ձր վարձով մը ուրիշի մը կ'ուտուի:
Պայմանագրին մէջ նշանակուած էր թէ,
4000 արտաւերի կ'յանձնուի վարձա-
կային՝ նախորդին հետ տարիներէ ի
վեր գրուածի պէս: Սակայն ծառե-
րուն պէտք եղած խնամքը չ'արուե-
լով՝ տարիներու շրջանին մէջ 4000ի
չափ ծառ ոչնչացիր է: Առաջնորդա-
րանը նախորդ վարձակալէն քեղիւմ
առած պահանջ անփոյթ գտնուած է
ստուգել թէ վարձակալը կանխաւ քեւ-
ջիւմ առած 4000 արտաւերին տարող-
չութեամբ ետ կ'վերադարձնէ՝ թէ ոչ:
Նոր վարձակալը կ'ըլի Ազգ. Առաջ-
նորդարան և ինչ կը պարզուի կ'պա-
հանջէ որ տարեկան վարձքէն դուրս
մը զեղնուի ի փոխարէն 4000 ծառի
պահանջ: Առաջնորդ արանը սկսեց
չի կախէր: Մարդն ալ պայմանագրի
ի ձեռնին կ'ըլի գտնուան, որ կ'ը
տապարանէ Առաջնորդ արանը 620 տկի
հատուցման՝ իւր փնտռ. փոխարէն:
Առաջնորդ արանը երկին սխալ մը կը
գործէ սնկ երկ թէ այնչափ պակաս
ծառ չկայ և թէ վարձակալին պահան-
ջածը չ'ապագանցէ: Դատարանին կողմէ
ի՞նչ մը կատարել կ'արջուի:

Ըստ սովորութեան Քննիչ Յանձնա-
խումբ մը ստեղծուի (նեղրի վրայ
ճամբար կ'ու յատու կ'առաջատանտ)
կ'մեկնի Յանձնախումբը տեղէն վրայ
քննութիւն մը կատարելով Առաջնոր-
դարանին անպատու վճիւր կուտայ, որ
այն քննութեան համար եղած ծախ-
քը 200 տկի ևս վճարելու հարկա-
գրուած է: Եթէ Առաջնորդ արանն իր

պարտքը ժամանակին կատարած բլար,
այս 850 լիբայի փոճ կ'որտեսն չէր
ենթարկուեր:

Այս առիթ «Նոր-Օր»ի յառաջի-
կայ թուով մանրամասն աեղեկութիւն-
ներ պիտի տանք:

ԿՈՒՋԷՔ ԲԱՂԴԵՐՆԻԴ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք ժողովրդական Տարեցոյցէն
հատ մը, որ շատ մը զուարճալի և
օգտակար հատուածներու հետ կը
գտնուի նաև գեղեցիկ բաղդացոյց մը
պէտք եղած բացատրութեամբ:

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց
զնեւ փոփարդը թո՛ւ հաճին գիտել
առ 8. ՕՏՆԻ ԽՆՆԱՄԵԱՆ, որ պատ-
րաստ է ուրիշ ամէն տեսակ գրքերու
մասին յանձնարարութիւնը փութով
կատարել փոքրիկ կանխավճարով մը:
Երջակայ քաղաքներէն Տարեցոյցի և
Օրացոյցի մասին եղած յանձնարա-
րութեան համար գրամի տեղ թըղ-
թագրով կ'ընդունուի:

Տարեցոյցի գինը 10 Դր. ողջ
Պարզ օրացոյցի գինը 2 "

Ա Ջ Դ

Շատերու կողմէ յայտնուած փա-
փարի մը զահագում տալու և մեր
ընթերցողներու գիրութիւն մը ըն-
ծայելու նպատակով, այսուհետեւ մեր
թերթը հատով պիտի ծախուի Շա-
րա Ապու-էլ-Ալիլի սկիզբը Պ. ԿՈՐԱ-
ՊԵՏ ԵՐՁՆԻՍՏԵԱՆԻ խանութը ինչպէս
նաև Դըլմ-Պէյ փողոցի ծայրը և թը-
րամիջներու կայարանին մօտ ծխա-
վաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՍՊԵԱՆԻ
բով:

Le Gérant J. MUNIER
Տպա. «Միութիւն». — Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿՈՒ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժամութիւնը արամատունը,
այս անգամ ունեցաւ իւր Եզրկոտտի
գործակալն ալ, Տ. ՄԿրտիչ Սօսոյեան,
որ իւր հրապարակային ցոյց տուած
պարկեշտ գործունէութեամբն ամե-
նաւ վաստակելու կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ.
թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղա-
քապետութեան պաշտօնապէս վա-
ւերացուած փոխանորդարի համա-
ձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի
միջոցաւ ամեն տեսակ զրամական և
Քուէրի Ֆոնտիլէի, Վիլ աը Բարիի և
Գաղղիական ամէն արժեթուղթերու
գործողութիւններ, զանձուներ: Ամա-
կան չնչին գումարի մը խնայողու-
թեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն,
պահեստի բաժնեթուղթ մը, վիճակա-
հանութեամբ երաշխաւորուած:

Փափարդները հաճին գիտել Նի-
պոսի վրայ փաստարան Ռարթարիի
գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըր-
կել հետեւեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՆԱԲՈՅԹ Պ. ՆԻԿՈՒԴԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ,
Գաֆէ աը լա Պուրսի կից, Բ. յարկ,
թիւ 9 գաստիկոնը:

Կը բժշկէ բերնի և սկուայի ամեն
տեսակ հիւանդութիւնները: Ազրատ-
ները ձրի կը դարմանէ ամեն օր, ա-
ռաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵԼԱՆԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ. ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ ԱՐԱՆ ԵՒ ՏԳՆԱՆՆԵՐ ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապրիլի մեծ պողոտային վրայ Տայիւայի
Սանիթի դիւանը, ճախիկն ելեկտրակոն
գործիներու վաճառատունը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած
հաստատուած բլլալով կը յայտարա-
րենք այդպէս հասարակութեան թէ՛
պատարտու ենք պահպանել մեզ գիմոյ
Պատ. յաճախողները, գործի մար-
րութեան, գիններու չափաւորութեան
և ճշգրտագոյնութեան կողմէն:

Մեր գործատուը այն մէջ կ'աւան-
դուին նաև ձեւագրութեան գասեր
ամերիկեան ամենավերջին կատարե-
լագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմու
մեր գործատուին:

ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱՋԱՆՃԵԱՆ

Եւրա Ապու-Սապան

Նիկո-Տնիլիսիսի դեղագրանի դիւանը:

Օգտաւն ու զուարճալի գիրք մա-
քուր ու վայելուչ սպորտ. համեզ ու
անեղարար կերակուրներու զանազա-
նութիւնն, անխորդախ պատրաստու-
թիւն. ճոխ ճաշացոյցակ մը դերա-
մատչելի գիներով ահա՛ Գալանձ-
եան եղբարց ճաշարանը:

Ով որ կ'ուզէ, փորձի համար մէկ
անգամ թո՛ղ գիմէ, վաստան պէտք է
ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի
դառնայ հայկական ճաշարանին:

Տ Պ Ա Ր Ա Ն
Մ Ե Ա Ե Ե Ե Ե Ե
Ի ԳԱՀԻՐԷ
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՍՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ
Սոյն նորակալով տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա-
րակութիւններ, պարբերական թերթեր, յարաբարութիւններ, շրջաբերականներ, այցետուներ, մահազգեր,
հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագրեր, նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:
Յանձնարարութիւններ կը կատարուին փոքրով, ամենայն ինքնուրոյն և անշահաւոր սպազորութեամբ:
ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ